Վերապատրաստող կազմակերպություն

**ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան դպրոց>>**

**ՊՈԱԿ**

**Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների**

**Վերապատրաստում**

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝** Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

**Անցկացման վայրը՝** Վարդենիս

**Աշխատանքի ղեկավար՝** Բեյբության Հասմիկ

**ՈՒսուցիչ՝** Առաքելյան Գոհար

**Դպրոց՝** <<Կուտականի միջնակարգ դպրոց>>

Վարդենիս-2022

# Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Հետազոտության նպատակը 4
3. փորձարարական դաս 6
4. Դասի պլան 1 9
5. Դասի պլան 2 14
6. Եզրակացություն 16
7. Գրականության ցանկ 17

# Ներածություն

Հայ իրականության մեջ կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել: Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը: Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի բարելավումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը:

Հայոց պատմություն առարկան միշտ իր կարևոր ներդրումն է ունեցել հայ մանուկների ազգային մտածելակերպի, ազգային արժեքների ձևավորման գործընթացում: Դարեր շարունակ մեր պատմիչների աշխատություններն օգտագործվել են որպես դասագիրք և ազգային, հայրենասիրական ոգով դաստիարակել բազում սերունդներ: Մեր հարափոփոխ աշխարհում ինչքան էլ որ փոխվեն հասարակությունների մտածելակերպը, արժեհամակարգը, վերաբերմունքը ժամանակակից երևույթների գործընթացների հանդեպ, միևնույն է մատաղ սերնդին պետք է դաստիարակել ազգային արժեքներով ու հերոսական անցյալի օրինակներով: Բայց հասարակական ընդհանուր նորմերի վերաձևումների վերափոխումների պարագայում կարծես թե երկրորդ պլան է մղվել անհատի հոգևոր աշխարհը, երեխաների դաստիարակությունը: Այսօր, երբ նյութականացվել է ամբողջ աշխարհն ու մարդկային հարաբերությունները, մարդը հեռացել է արվեստից, մշակույթից, գրականությունից, որի արդյունքում հոգևոր արժեքները աստիճանական անկում են ապրում: Դպրոցների, ուսուցիչների կարևորագույն նպատակն ու խնդիրն է սովորողների մեջ ձևավորել և զարգացնել ազգային արժեքային համակարգ, ազգային մտածողություն: Իսկ ի՞նչ ասել է «արժեհամակարգ»: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստույգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր

ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը։ Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության, պատմության դերը։ Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ

ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած

մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ

ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

# Հետազոտության նպատակը

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է։ Առարկան և նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական Ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը։ Դասընթացը նպաստում է իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից։ Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել

բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ։ Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ։ Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ)

միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատականառանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Մեր օրերում դպրոցներում հայ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին բախվել է լրջագույն խնդիրների և բարդությունների: Շատ բարդ և դժվար է դպրոցական առկա նյութի ուսուցմանման հենքի վրա ազգային արժեհամակարգի ձևավորում իրականացնել մեր օրերում: Ազգային արժեհամակարգի ձևավորման արդի մարտահրավերները լուծելու համար ուսուցչի դերակատարությունը մեծ է: Յուրաքանչյուր ուսուցիչ ինքը կարող է իր կազմակերպած դասի ընթացքում ունենալ ցանկալի արդյունք:

Անձնային արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Սակայն միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել խմբավորել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները: Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային

կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական հայեցակարգերի վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում

արժեքների մեկնաբանությունից:

# փորձարարական դաս

Թեման՝ Արտաշեսյանների հարստությունը՝ Տիգրան Մեծ:

Դասի հենց սկզբից սովորողների համար պետք է պարզ լինի, թե ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին,ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում: Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված,հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն:Առաջինը ընտրվել է այն դասը, որը ձևակերպվում է որպես նոր նյութի ուսումնասիրություն: Աշակերտներին նախապես հանձնարարվել է ծանոթանալ թագավորության հիմանդրման նախադրյալների հետ, շեշտը դնելով ծագումնաբանության վրա: Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է ներկայացնել դասը՝ (պլանը և հավելվածում), դրա ընթացքը, պրոբլեմային հարցերը և լուծման հնարավորություններն ու ուղիները: Մինչև դասը սկսելը ձևակերպվում է դասի առանցքային հարցերը: Կարևոր է, որ հարցերը բարդ չլինեն, որպեսզի աշակերտները կարողանան դրանք լուծել և խոչընդոտներից չհուսահատվեն:

Դասը կառուցվելու է Պատմական հեռանկար,, սկզբունքի շուրջ: Այն սովորողներին կօգնի հասկանան որ,<< անցյալը անծանոթ երկիր է>>, ուր մարդկանց համոզմունքներն ու դավանած արժեքները հաճախ շատ տարբեր են ներկայիս արժեքներից և համոզմունքներից: Այն կօգնի աշակերտներին հասկանալ հին դարերում ապրած և հզոր պետականություն կերտած հայի ոգին,կվերականգնեն և պատկերացումները մարդկանց վարքը հասկանալու համար: Թույլ կտա փաստարկել, կրիառել արշակունիների թագավորության դարաշրջանի արժեքներն ու համոզմունքները:

Պատմական հեռանկար զարգացնելու արդյունավետ միջոց են այն ուսումնական ռազմավարությունները, որոնք սովորողին թույլ կտան բացատրել և համադրել իրադարձությունները:

Դասի սկզբում հնչում են հետևյան հարցերը՝

1.Ինչպիսի՞ աշխարհաքաղաքական միջավայրում հիմնվեց Արտաշեսյանների թագավորությունը

2.Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցավ Հայաստանում Արտաշեսյանների գահակալման ժամանակ

3.Ինչպե՞ս գահակալեց Տիգրան Մեծը

4.Հայաստանը ինչպիսի՞ն էր Տիգրան Մեծի օրոք

Աշակերտները որպես քննարկման հարց վերցրել էին, թե որն է հայ ժողովրդի դիրքորոշումը Արտաշեսյանների կառավարման ժամանակ և ինչպես կվարվեին իրենք: Աշակերտները կազմել էին նաև արքաների վերաբերյալ ժամանակագրական աղյուսակ:

Նյութի բովանդակությունը սովորողներին հասցնելու, նրանց գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերմանը ապահովելուն դասն արդյունավետ վարելու համար ուսուցման գործընթացում կիրառվելու են հետևյալ դիդակտիկ նյութերը՝

· նկարներ

. օժանդակ նյութեր

. քարտեզ

. գծապատկերներ

Դասարան մտնելուց հետո ուսուցիչը ունի մեկ ամենակարևոր քայլ՝ կոտրել սառույցը սովորողների և սովորեցնողի միջև: Այդ նպատակով նա սկսում է կարճ հարցերի միջոցով և խթանել նրանց հետաքրքրությունը, և ծանոթացնել դասի կառուցվածքին:

Օրինակ հնչում են հետևյալ հարցերը.

Տեսնենք ով՞ ավելի լավ կհիշի մեր նախորդ դասի արքաներին

. Այսօր ձեզ համար բացահայտումների օր է լինելու:

.Պատկերացնումո՞ւմ եք, թե մենք այսօր ո՞ր արքայի գործունեությանն ենք

ծանոթանալու:

Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.

Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները: Ի՞նչ հարցեր են առաջացել: Եթե հարցեր չունեն տնային առաջադրանքները կներկայացնեն դասը պատասխանելու ընթացքում: Տնային հանձնարարությունները ստուգվում են ընթացիկ հարցերի միջոցով:

Աշակերտները շահագրգռվածությամբ սկսում են վերհիշել նախորդ օրվա իրենց յուրացրած նյութը, մեկը մյուսին լրացնելով ներկայացնում են արքաներին և իրենց հետաքր քրասիրությունը լարում սպասվելիք նոր գիտելիքների և կարողությունների յուրացմանը:

Աշակերտներին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումները:

Աշակերտները բացում են իրենց տետրերը և պատրաստվում դասին: Կրկնում են դասը:

Ուսուցիչը մոտենում է գրատախտակին և կիրառում <<մտագրոհ>> մեթոդը, որի միջոցով թույլ է տալիս արտահայտվել բոլոր աշակերտներին:<<Մտագրոհի միջոցով կարողանում է

ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը, հասկանալ թեմայի յուրացման մակարդակը։Այնուհետև հրահանգում է աշակերտներին մտածել մեկ հետաքրքիր դրվագ իրենց արտահայտած մտքի շուրջ։

Այնուհետև ուսուցիչը ԽԻԿ համակարգի միջոցով ուղղորդում է սովորողներին։

Այս փուլում նրանք ներկայացնում են նյութը,որի ընթացքում հնչում են հարցեր՝ ներգրավել ով մյուս սովորողներին նյութի քննարկման մեջ։

Ուսուցիչը խթանում է, հիշեցնում է, հարցեր է տալիս։

Աշակերտները մեկը մյուսին արագ հաջորդելով ասում են իրենց սովորած և յուրացրած թեմային վերաբերվող մեկ կարևոր իրադարձություն,որի մասին սկսում են մտածել ինչ որ հետաքրքիր դրվագ։ Մոտիվացվում են, աշխուժանում,սկսում են քննարկել։

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը ապահովում է՝

1.սովորողների հետաքրքրության պահպանումը մեջբերելով հայտնի պատմիչների խոսքերից

2.տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, ստուգիչ հարցերի միջոցով

3.նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը։Ուսուցիչը սահուն կերպով ներկայացնում է նոր դասը

4.հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ բերում օրինակներ ցույց է տալիս անցյալ դարերի և ներկայի տարբերությունը

5.կատարում է մտքի քարտեզագրում՝ գրատախտակին որոշակի մեխանիզմներ

ցուցադրելով Կշռադատման փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կրիառել իրենց սովորածն ու յուրացրածը։ՈՒսուցիչը լուծում է իր առջև դրված խնդիրը ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները։

Սովորողներից ում անունը հնչում է մոտենում է ուսուցչի սեղանին վերցնում է սեղանին դրված նկարներից մեկը և ներկայացնում դասարանին։Նախապես հայտարարվում է օգտագործել մեկ բովանդակալից նախադասություն։

Աշակերտները աշխատում են, կատարում են առաջադրանքը, կշռադատում են, ամփոփում են յուրացրածը, եզրահանգումներ են անում։

Ամփոփելով հետազոտական դասը կարելի է նշել, որ այն հաջողված էր, թիրախային խմբի աշակերտները՝ կարողացան որոշ չափով վերլուծել խորքային հարցերը դրանց հանգուցալուծումը գտնել։ Աշակերտները կարողացան արտահայտել իրենց դիրքորոշումը

թեմայի շուրջ: Դասը հետաքրքիր էր,ժամանակի առումով կային որոշակի սահմանափակումներ:
Աշակերտները ոգևորված արտահայտվում էին, համեմատում և վերլուծում:
Հայրենասիրական ոգին բարձր էր, բոլորը քննարկում էին ազգային գաղափարներ:

# Դասի պլան 1

| | |
|---|---|
| **ՈՒսուցիչ՝** | Գոհար Առաքելյան |
| **Դպրոց՝** | Կուտականի միջնակարգ դպրոց |
| **Դասարան՝** | 10-րդ |

**Դասի թեմաթեմա, հարցեր**

**Թեմա:** Արտաշեսյանների հարստությունը՝ Տիգրան Մեծ

**Հարցեր:**

1. Ինչպիսի՞ աշխարհաքաղաքական միջավայրում հիմնվեց Արտաշեսյանների թագավորությունը
2. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցավ Հայաստանում Արտաշեսյանների գահակալման ժամանակ
3. Ինչպե՞ս գահակալեց Տիգրան Մեծը
4. Հայաստանը ինչպիսի՞ն էր Տիգրան Մեծի օրոք

| |
|---|
| **Դասերի վերջնարդյունքներ**<br><br>Դասի հենց սկզբից սովորողների համար պետք է պարզ լինի թե ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին,ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում:Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված,հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն: |
| **Կապը պատմական ակտիվ մտածողության սկզբունքների հետ**<br><br>Դասը կառուցվելու է, Պատմական հեռանկար, սկզբունքի շուրջ: Այն սովորողներին կօգնի հասկանան, որ, <<անցյալը անծանոթ երկիր է>>, ուր մարդկանց համոզմունքներն ու դավանած արժեքները հաճախ շատ տարբեր են ներկայիս արժեքներից և համոզմունքներից: Այն կօգնի աշակերտներին հասկանալ հին դարերում ապրած և հզոր պետականություն կերտած հայի ոգին, կվերականգնեն պատկերացումները մարդկանց վարքը հասկանալու համար: Թույլ կտա փաստարկել, կրիառել արշակունիների թագավորության դարաշրջանի արժեքներն ու համոզմունքները:<br><br>Պատմական հեռանկար զարգացնելու արդյունավետ միջոց են այն ուսումնական ռազմավարությունները, որոնք սովորողին թույլ կտան բացատրել և համադրել իրադարձությունները: |
| **Ռեսուրսներ**<br><br>Նյութի բովանդակությունը սովորողներին հասցնելու, նրանց գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերմանը ապահովելուև դասն արդյունավետ վարելու համար ուսուցման գործընթացում կիրառվելու են հետևյալ դիդակտիկ նյութերը՝<br><br>. նկարներ<br><br>. օժանդակ նյութեր<br><br>. քարտեզ<br><br>. գծապատկերներ: |

| **ՈՒսուցչի գործողությունները** | **Աշակերտների գործողությունները** |
|---|---|

| | |
|---|---|
| 5 րոպե<br><br>**Դասի սկիզբ**<br><br>Դասարան մտնելուց հետո ուսուցիչը ունի մեկ ամենակարևոր քայլ՝ կոտրել սառույցը սովորողների և սովորեցնողի միջև: Այդ նպատակով նա սկսում է կարճ հարցերի միջոցով և խթանել նրանց հետաքրքրությունը, և ծանոթացնել դասի կառուցվածքին:<br><br>Օրինակ հնչում են հետևյալ հարցերը.<br><br>. տեսնենք ով՞ ավելի լավ կհիշի մեր նախորդ դասի արքաներին<br><br>. այսօր ձեզ համար բացահայտումների օր է լինելու<br><br>. պատկերացնումու՞մ եք թե մենք այսօր ո՞ր արքայի գործունեությանն ենք ծանոթանալու<br><br>Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.<br>Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները:Ի՞նչ հարցեր են առաջացել: Եթե հարցեր չունեն տնային առաջադրանքները կներկայացնեն դասը պատասխանելու ընթացքում: Տնային հանձնարարությունները ստուգվում են ընթացիկ հարցերի միջոցով: | Աշակերտները շահագրգռվածությամբ սկսում են վերհիշել նախորդ օրվա իրենց յուրացրած նյութը,մեկը մյուսին լրացնելով ներկայացնում են արքաներին և իրենց հետաքրքրասիրությունը լարում սպասվելիք նոր գիտելիքների և կարողությունների յուրացմանը:<br><br>Աշակերտներին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումները:<br><br>Աշակերտները բացում են իրենց տետրերը և պատրաստվում դասին:<br><br>Կրկնում են դասը: |

| | |
|---|---|
| 15 բոպե<br><br>**Փուլ 1**<br><br>Ուսուցիչը մոտենում է գրատախտակին և կիրառում <<մտագրոհ>>մեթոդը, որի միջոցով թույլ է տալիս արտահայտվել բոլոր աշակերտներին: Մտագրոհի միջոցով կարողանում է ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը, հասկանալ թեմայի յուրացման մակարդակը: Այնուհետև հրահանգում է աշակերտներին մտածել մեկ հետաքրքիր դրվագ իրենց արտահայտած մտքի շուրջ:<br><br>Այնուհետև ուսուցիչը ԽԻԿ համակարգի միջոցով ուղղորդում է սովորողներին:<br><br>Այս փուլում նրանք ներկայացնում են նյութը, որի ընթացքում հնչում են հարցեր՝ ներգրավելով մյուս սովորողներին նյութի քննարկման մեջ:<br><br>Ուսուցիչը խթանում է, հիշեցնում է, հարցեր է տալիս:<br><br>. Ուղղորդում է հետաքրքրասիրությունը թեմայի շուրջ, հարցնում է Արտաշես արքայի գահակալման մասին<br><br>. հիշեցնում, վեր է հանում նախորդ գիտելիքները, ակնարկում է Երվանդունիների մասին<br><br>. կապում է նախորդը նորի հետ /Երվանդունի-Արտաշեսյաններ տարբերությունները մատնանշում | Աշակերտները մեկը մյուսին արագ հաջորդելով ասում են իրենց սովորած և յուրացրած թեմային վերաբերվող մեկ կարևոր իրադարձություն, որի մասին սկսում են մտածել ինչ որ հետաքրքիր դրվագ: Մոտիվացվում են, աշխուժանում, սկսում են քննարկել |

| | |
|---|---|
| . գտնում է խթանումն իրականացնող արդյունավետ հնարներ՝ հարցեր է տալիս, քարտեզն է ցույց տալիս,բերում է օրինակներ<br><br>10-15 րոպե<br><br>**Փուլ 1-ի ամփոփումամփոփում**<br><br>Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը ապահովում է՝<br>1. սովորողների հետաքրքրության պահպանումը՝ մեջբերելով հայտնի պատմիչների խոսքերից<br><br>2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, ստուգիչ հարցերի միջոցով<br><br>3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր<br><br>կառույցի ստեղծումը: Ուսուցիչը սահուն կերպով ներկայացնում է նոր դասը<br><br>4. հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ, բերում օրինակներ, ցույց է տալիս անցյալ դարերի և ներկայի տարբերությունը<br><br>5. կատարում է մտքի քարտեզագրում՝ գրատախտակին որոշակի մեխանիզմներ ցուցադրելով | Աշակերտները ներկայացնում են դասի հիմնական բովանդակային մասերը, մոտենում են քարտեզին և ցույց տալիս համապատասխան տարածքը, վայրը: Պատասխանում են հարցերին:<br><br>Լսում են, ինֆորմացվում են, աշխատում են: |

| | |
|---|---|
| 10 րոպե<br><br>**Փուլ 2**<br><br>Կշռադատման փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կրիառել իրենց սովորածն ու յուրացրածը: ՈՒսուցիչը լուծում է իր առջև դրված խնդիրը՝ ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները:<br><br>Սովորողներից ում անունը հնչում է, մոտենում է ուսուցչի սեղանին, վերցնում է սեղանին դրված նկարներից մեկը և ներկայացնում դասարանին: Նախապես հայտարարվում է<br><br>օգտագործել մեկ բովանդակալից նախադասություն:: | Աշակերտները մոտենում են ուսուցչի սեղանին, պատահականության սկզբունքով վերցնում են որևէ նկար և մեկ նախադասությամբ մեկնաբանում այն:<br><br>Պատասխանում են առաջադրած հարցերին:<br><br>Աշակերտները աշխատում են, կատարում են առաջադրանքը, կշռադատում են, ամփոփում են յուրացրածը, եզրահանգումներ են անում: |
| 3-5 րոպե<br><br>**Ամփոփում**<br><br>ԳՆԱՀԱՏՈՒՄ Է՝<br><br>1. աշակերտների պատասխանները<br><br>2. աշակերտների կատարած աշխատանքները | Աշակերտները սպասում են՝<br>. գնահատվելուն ,<br>. գնահատականին, որի արդյունքում՝<br>. ոգևորվում են,<br>. հիասթափվում են,<br>. տխրում են,<br>. ուրախանում են: |

| |
|---|
| **Տնային աշխատանք**<br><br>ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ Է՝<br><br>1. տնային առաջադրանք<br><br>2. բացատրում է առաջադրանքը |

# Դասի պլան 2

| | |
|---|---|
| **ՈՒսուցիչ՝** | Գոհար Առաքելյան |
| **Դասարան՝** | 8-րդ |
| **Դասի թեման** | Հայդուկային շարժումը |
| **Դասի նպատակը** | • Ձևավորել գիտելիքներ 19-րդ դարի 2-րդ կեսի հայ ազգային-ազատագրական հայդուկային պայքարի առաջացման, նրա գործիչների և նշանակության<br>մասին<br>• Դաստիարակել հայրենասիրություն, անձնազոհություն, հայրենիքին ծառայելու ձգտում |

| | |
|---|---|
| **Դասի խնդիրը** | • Ուսուցանել հայդուկային շարժման առաջացման պատճառները<br>• Ձևավորել հարգանք հայդուկների գործունեության հանդեպ<br>• Ազատագրական պայքարի նվիրյալների գործունեության հետ ծանոթացնելով ձևավորել արժեհամակարգ<br>• Ցույց տալ հայդուկային շարժման կապը Արցախյան շարժման հետ |
| **Իմաստի ընկալման փուլ** | - 19-րդ դարի հայ ազատագրական շարժման պատմությունը, նշանավոր հայդուկներին<br>- նրանց դերը հայ ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա, հատկապես Արցախյան գոյամարտի<br>- հայդուկային շարժման ազդեցությունը հետագայում սեփական ուժերի հանդեպ վստահության ձևավորման գործում<br>- հայդուկային շարժման պատմական նշանակությունը հայ ժողովրդի քաղաքական հասունացման և ազգապահպանման գործում<br>- որևէ երգ հայդուկի մասին |
| **Կշռադատման փուլ** | - մանրամասն ներկայացնել հայդուկների գործունեության դրական և բացասական կողմերը<br>- բացատրել Արևմտյան Հայաստանի որ մասում է ծագել հայդուկային շարժումը<br>- դաստիարակվել հայրենասիրությամբ, անձնազոհությամբ, հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ |
| **Վերջնարդյունքներ** | ՈՒսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կ րիառել իրենց սովորածն ու յուրացրածը Աշակերտները հագեցած ինֆորմացիա ստացան,նրան ք ակտիվ են ոգևորված,յուր աքանչյուրը յուրովի արժևորեց իր հայրենիքի գաղափարը |

# Եզրակացություն

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ ազգային արժեհամակարգի ձևավորման համար դպրոցում տարբեր դասաժամերին անհրաժեշտ է կարևոր տեղ հատկացնել՝ պատմությանը հատկապես հայոց պատմության դասաժամերին:

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի և հայոց պետականության գոյությունը: Հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել քան երբևե պետք է համախմբվել մեկ միասնական բռունց դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել - ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբվածություն և սառը դատողություն: Բանավեճերի միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին ու սովորական հայ քաղաքացին:

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են փոքրաթիվ հայկական ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին՝ փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը՝ հանուն որի ելնում են պայքարի:

Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել իր գոյության իրավունքը: Սա էլ կանցնի, առավել քան համոզված եմ, քանզի մեր գործն արդար է, մենք պայքարում ենք մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզի համար, այլ ոչ թե զավթում օտարինը, ուստի պետք է համախմբվել, մի կողմ թողնել բոլոր տեսակի տարաձայնությունները և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ փայլուն սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր, մեր խնդիրն է նպաստել, ուղղորդել, որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն, իրենք են մեր ապագան ու մեր երկիրը շենացնողները:

# Գրականության ցանկ

1. «Հավատամք» Գ. Նժդեհ, Երևան 2011 թ. ազգային, մշակութային արժեքներով։

2. «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2016 թ.

3. Անահիտ Մենեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ (ուսումնաօժանդակ ձեռնարկ). – Եր.: ԵՊՀ հրատ., 2013թ.։

4. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017։